**Արձանագրություն N 4**
**«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ**

ք. Երևան

14.01.2020թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկրտչյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Զեյնալյան /գնահատող/, Ա. Ղարիբյան /գնահատող/, Ժ. Բալաբանյան /բացող/, Ա. Ավետիսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

## 1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

---

(Ա. Մկրտչյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն գների նվազեցման շուրջ անցկացվող միաժամանակյա բանակցություններին ծանուցված մասնակիցներից ոչ ոք չի ներկայացել:

## 2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

---

(Ա. Մկրտչյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| ՄՏՍ Արմենիա ՓԲԸ | Բավարար |
| Յուքոմ ՍՊԸ | Բավարար |
| Ջինէսի Ալֆա ՓԲԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 3. «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

---

(Ա. Մկրտչյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Յուքոմ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Ա. Մկրտչյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Տվյալների հաղորդման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել հինգ օրացուցային օր անգործության ժամկետ:

4.3 Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագրի նախագիծը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | ------------------------------ | Ա. Մկրտչյան |
| Անդամներ՝ | ------------------------------ | Վ. Ջեյնալյան |
| | ------------------------------ | Ա. Ղարիբյան |
| | ------------------------------ | Ժ. Բալաբանյան |
| | ------------------------------ | Ա. Ավետիսյան |
| Քարտուղար՝ | ------------------------------ | Ս. Եղիազարյան |